**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՄԱՐՏԻ 2020թվականի N 109

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2020-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Ներքին աուդիտի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 17-ի թիվ 43-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով,

1. Վավերացնել Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020-2022 թվականների ռազմավարական ծրագիրը համաձայն հավելված 1-ի:

2. Վավերացնել Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան ծրագիրը համաձայն  հավելված 2-ի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 20 թ. Մարտի 23
գ. Ակունք

Հավելված 1
Հաստատված է
Ակունքի համայնքի ղեկավարի
23 մարտի 2020թ. N 109 որոշման

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Ծրագրի առաջին տարի՝ **2020 թվական**
Ծրագրի վերջին տարի՝ **2022 թվական**

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների,Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4.Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Ակունքի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5.Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Ակունքի համայնքի ղեկավարի հետ:

6.Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Ակունքի համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

## II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7.Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Ակունքի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Ակունքի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման պարտականություններ իրականացնողի առաքելությունն ու խնդիրներն են.

1)օժանդակել Ակունքի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2)օժանդակել Ակունքի համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3)տրամադրել վերահսկող մարմիններին Ակունքի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4)օժանդակել Ակունքի համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5)իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6)ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

### III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, փոփոխությունները:

### IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթադաբանությամբ: Ակունքի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար բաժինն իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորի մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

| Միավոր | Տարի | Ժամկետ (մարդ/օր) | Աուդիտի տեսակ | Ռիսկի խումբ |
|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2020 | 170 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2021 | 180 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2022 | 180 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2020 | 100 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2021 | 100 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2022 | 100 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2020 | 130 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2021 | 140 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2022 | 140 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2020 | 20 | Համակարգի գնահատման աուդիտ | Ցածր |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2021 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2022 | 20 | Կատարողականի աուդիտ | Ցածր |

Հավելված 2
Հաստատված է
Ակունքի համայնքի ղեկավարի
23 մարտի 2020թ. N 109 որոշման

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Տարի՝ **2020 թվական**

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների:
2. 2020 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի 2020-2022 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա: Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2020 թվականի ընթացքում:
3. Տարեկան ծրագիրը սահմանում է 2020 թվականի ընթացքում Ակունքի համայնքապետարանում իրականացվող ներքին աուդիտի առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

## II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4. Ներքին աուդիտի 2020 թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտորն ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

## III. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

5. Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտորը մշակում և Ակունք համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում 2020 թվականի Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտորի կողմից և վավերացվում Ակունք համայնքի ղեկավարի կողմից:

## IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտորի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝
   1)շարունակական մասնագիտական վերապատրաստումը,
   2)ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

## V. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Ակունքի համայնքապետարանում ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում ստորաբաժանման ղեկավարի աշխատանքներն իրականացվում են «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից:

## VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ Ակունքի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և Ակունք համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

9.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Ակունքի համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի բաժնի գործունեությունը:

10.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է Ակունքի համայնքի ղեկավարին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

11.Ներքին աուդիտի բաժնի պետը ներքին աուդիտի բաժնի ստեղծման, վերակազմակերպման կամ փոփոխության դեպքում պետք է Լիազոր մարմնին ներկայացնի հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 1-ին ձևով՝ ներքին աուդիտի ստորաբաժանման գրանցման, վերակազմակերպման կամ փոփոխության վերաբերյալ Ակունք համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

12.Ներքին աուդիտի բաժնի պետը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարնին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով:

13.Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

14.Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են կազմում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

| Հ/Հ | Միավոր | Աուդիտի տեսակ | Խորհրդա-տվության տեսակ | Պլանա-վորված օրերի քանակ | Սկզբի ամսաթիվ | Ավարտի ամսաթիվ | Գործընթաց | Կցված աշխատակից | Պաշտոն | Ընդամենը մարդ/օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | Համակարգի գնահատման աուդիտ | | 90 | 01/01/2020 | 31/12/2020 | Համայնքապետարանի ակտիվների և պարտավորությունների գույքագրում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Բյուջետավորում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Հաշվապահական հաշվառում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | Ապրանքանյութական պաշարների շարժի իրականացում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Համայնքի տարածքում գործունեության թույլտվության գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Աշխատակիցների աշխատանքի ընդունում և ազատում, պաշտոնի անձնագրերի կազմում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Աշխատավարձի հաշվարկում, վճարում և եկամտային հարկի հաշվետվությունների ներկայացում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Կատարված ծախսերի փաստաթղթավորում | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| 2 | «Ակունք համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | Համակարգի գնահատման աուդիտ | | 50 | 01/01/2020 | 31/12/2020 | Հաշվապահական հաշվառման վարման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Ուսումնական պլանների կազման և հաստատման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Ծնողական վճարների հավաքագրման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| | | | | | | | Սննդամթերքի մենյու պահանջագրերի | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ներկայացման, ձեռք բերման, ծախսման գործառույթ | | | |
| | | | | | | | Երեխաների շարժի հաշվառման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| 3 | Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | Համակարգի գնահատման աուդիտ | | 60 | 01/01/2020 | 31/12/2020 | Գնումների պլանների կազմման և դրանցում փոփոխությունների կատարման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 20 |
| | | | | | | | ԳՀ գնման ձևով գնման ընթացակարգեր | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 30 |
| | | | | | | | Տեխնիկական բնութագրերի կազմման գործառույթ | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |
| 4 | Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | Համակարգի գնահատման աուդիտ | | 10 | 01/01/2020 | 31/12/2020 | Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | Զաբել Մաթոսյան | Ներքին աուդիտոր | 10 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՄԱՐՏԻ 2020թվականի N 110

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի,Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի դեկտեմբերի 12-ի N1096-Ն հրամանի պահանջներով որոշում եմ.

1. Հաստատել Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020 թ. Մարտի 23
գ. Ակունք

Հավելված 1
Հաստատված է
Ակունքի համայնքի ղեկավարի
23 մարտի 2020թ. N 109 որոշմամբ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Ծրագրի առաջին տարի՝ **2020 թվական**
Ծրագրի վերջին տարի՝ **2022 թվական**

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների,Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4.Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Ակունքի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5.Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Ակունքի համայնքի ղեկավարի հետ:

6.Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Ակունքի համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

## II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7.Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Ակունքի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Ակունքի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման պարտականություններ իրականացնողի առաքելությունն ու խնդիրներն են.

1)օժանդակել Ակունքի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2)օժանդակել Ակունքի համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3)տրամադրել վերահսկող մարմիններին Ակունքի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4)օժանդակել Ակունքի համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավվելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5)իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6)ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

## III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Ակունքի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, փոփոխությունները:

## IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Ակունքի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի բաժնի հետագա զարգացման համար բաժինն իրականացնում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորի մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

| Միավոր | Տարի | Ժամկետ (մարդ/օր) | Աուդիտի տեսակ | Ռիսկի խումբ |
|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2020 | 170 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2021 | 180 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ | 2022 | 180 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2020 | 100 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2021 | 100 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| «Ակունքի մանկապարտեզ» ՀՈԱԿ | 2022 | 100 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2020 | 130 | Համակարգի գնահատման աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2021 | 140 | Համապատասխանության աուդիտ | Միջին |
| Ակունքի համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների գնումների գործընթաց | 2022 | 140 | Կատարողականի աուդիտ | Միջին |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2020 | 20 | Համակարգի գնահատման աուդիտ | Ցածր |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2021 | 20 | Համապատասխանության աուդիտ | Ցածր |
| Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր | 2022 | 20 | Կատարողականի աուդիտ | Ցածր |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՐՏԻ 2020թվականի N 111

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշման հավելվածի 7-րդ և 9-րդ կետերը, Պարգև Կաղլենի Գրիգորյանի դիմումը և հաշվի առնելով կատարված մելիորատիվ աշխատանքները, որոշում եմ.

1. Պարգև Կաղլենի Գրիգորյանին պատկանող Ակունք համայնքի Կոտայք վարչական տարածքում գտնվող ,գյուղատնտեսական նշանակության ՝ ծածկագրեր 07-038-0121-0069, 5.50 հա մակերեսով այլ հողատեսքը փոխադրել բարձրարժեք հողատեսքերի՝ 4-րդ խումբ ,որպես արոտավայր:
2. Որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարու թյանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, իսկ մեկ օրինակ ը հողամասի սեփականատիրոջը:
3. Վերը նշված հողատեսքի փոփոխությունը սահմանված կարգով ներառել ընթաց իկ տարվա համար կազմվող հողային հաշվեկշռում:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20<u>20</u> թ. ________________

գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
30 ՄԱՐՏԻ 2020թվականի N 112

ՆՈՒՆԵ ԱՐԱՅԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով 2020 թվականի Ակունք համայնքի Կոտայք, Ակունք, Զառ բնակավայրերի ԱԱՊԿ տնօրեններ՝ Նունե եղիազարյանի, Շուշանիկ Մուրադյանի, Տաթևիկ Միքայելյանի դիմումը, որոշում եմ՝

1.Ակունք համայնքի Կոտայն բնակավայրի ԱԱՊԿ տնօրեն բժշկուհի՝ Նունե եղիազարյանին տրամադրել ֆինանսական օգնություն՝ 60 000 (վաթսուն հազար) դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2020թ. մարտի 30
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2020թվականի N 113

## ԳԱԳԻԿ ՎԱԼՏԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշման հավելվածի 7-րդ կետի, հիմք ընդունելով Գագիկ Վալտերի Մանուկյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ `

1. Համաձայնեցնել կառուցապատող` Գագիկ Վալտերի Մանուկյանի կողմից ներկայացրած <<ՍԵԳԱՍ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 5/1 փողոց թիվ 1հասցեի` ծածկագիր `07-049-0030-0001, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան և պարսպի կառուցման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 20 թ. մարտի 31
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱԿՈՒՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N 06 31 մարտ 2020թ**

Տրված է կառուցապատող *ԳԱԳԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան Հանրապետության փ 15 շ 5բն*

(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը

*ՀՀ, Կոտայքի մարզ, Ակունք համայնք, գ. Նոր գյուղ , 5/1 Փ. , 1* հասցեում

ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

*Բնակելի տան նախագիծ, սեյսմիկ 2-րդ գոտի՝ ՀՀՇՆ 2-րդ 02022006թ, մանսարդային հարկով բնակելի տուն, առանցքային չափերը՝ 6,3x6,7, բարձրությունը 3,30մ, բնակելի տան կառուցապատման մակերեսը կազմում է 53,5 քմ* օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

*Բնակելի տան կառուցման աշխատանքները իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության համար* շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ________ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1)մշակվել են *Աշխատանքային նախագիծ <<ՍԵԳԱՍ>> ՍՊԸ*

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

*11791* կողմից,

լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) _թ. N _փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները) ________

(նշել փորձաքննության տեսակը)

________ կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ *04/03/2020 թ. N 10*

(Նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների *04/03/2020 թ. N 10* հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել *31 մարտ 2020 - 31 մարտ 2022* ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող

հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[ ] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,
[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:
3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է 14էջ էջից, կարված և դրոշմակնքված է Ակունք համայնքի ղեկավարը կողմից:
4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են
(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)
________________________________________կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ____________և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ____________________________հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝
1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.
3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
________________________________________
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)________________________________քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ____________________
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ ________________________________
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:
9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ